



**Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից ձևավորած 01-08-2020 - 31-08-2020թթ. տվյալների ամփոփում**

Հաշտարարի գրասենյակը 01-08-2020 - 31-08-2020թթ. ընթացքում ստացել է ընդհանուր քանակությամբ 1,404 բողոք, որից՝ ֆինանսական կազմակերպություններին վերաբերող բողոքները 1,348-ն են:

Ֆինանսական կազմակերպություններին վերաբերող 1,348 բողոքներից 65-ը համաձայն «Ֆինանսական համակարգի Հաշտարարի» մասին ՀՀ օրենքի, ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից (որոշ պահանջների վերաբերյալ արդեն իսկ առկա է դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի վճիռ, դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից քննվում է հաճախորդի և Կազմակերպության միջև նույն պահանջի առարկայի վերաբերյալ գործ, պահանջը չի ներկայացվել Օրենքով սահմանված ժամկետներում, Կազմակերպության լիցենզիայի գործողությունը դադարեցվել է և այլն):

Հաշտարարի քննությանը ենթակա բողոքների մի մասի դեպքում հաճախորդները նախապես դիմած չեն եղել ֆինանսական կազմակերպություններին. նման դեպքերում Գրասենյակի աշխատակիցները հաճախորդներին օգնել են գրել բողոք-պահանջներ: Հաշտարարի քննությանը ենթակա բողոքների մի մասն էլ բավարարվում են կազմակերպությունների կողմից՝ բողոք-պահանջների հիման վրա՝ առանց Գրասենյակ պահանջ-դիմում մուտք անելու. լինում են նաև բողոքներ, որոնց նախնական ուսումնասիրությունից հետո Հաճախորդին խորհուրդ է տրվում պահանջը չհանձնել քննության, քանի որ բացակայում է Հաճախորդի՝ որպես սպառողի շահերի ոտնահարման փաստը:

01-08-2020 - 31-08-2020թթ. Հաշտարարի գրասենյակը քննության է ընդունել 798 պահանջ-դիմում:

<b>Գրասենյակ ներկայացրած բողոքների քանակ (հատ), որից՝</b>	<b>1,404</b>
<b>Վերաբերում են ֆինանսական համակարգին՝</b>	<b>1,348</b>
1. Ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից	65
2. Ենթակա են քննության Հաշտարարի կողմից	1283
2.1 Ընդունվել են քննության, ուղղված են՝	798
2.1. 1. Բանկերի դեմ, կապված են՝	434

• Վարկային գործարքների հետ	324
• Ավանդային գործարքների հետ	107
• Վճարահաշվարկային գործարքների հետ	3
<b>2.1. 2. Ապահովագրական ընկերությունների դեմ, կապված են՝</b>	<b>317</b>
• Մեքենայի ԿԱՄԿՈ ապահովագրության հետ	2
• Առողջության ապահովագրության հետ	2
• Աջակցության ապահովագրության հետ	1
• Գույքի Ապահովագրության հետ	3
• Դժբախտ պատահարներից ապահովագրության հետ	1
• Պատասխանատվության կամավոր ապահովագրության հետ	1
• ԱՊՊԱ-ի հետ (ներառյալ՝ Բյուրո)	307
<b>2.1. 3. Վարկային կազմակերպությունների դեմ</b>	<b>45</b>
<b>2.1.4. Դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների դեմ</b>	<b>2</b>

<b>Քննության ընդունված պահանջների ելքեր (հատ դեպք)՝ [1]</b>	<b>627</b>
Պահանջը բավարարվել է հաշտեցման միջոցով	231
Պահանջը մասնակի է բավարարվել	37
Պահանջը բավարարվել է	18
Պահանջը մերժվել է	264
Պահանջի քննությունը դադարեցվել է	45
Պահանջի քննությունը մերժվել է	32

Հաշտարարի գրասենյակ կարելի է դիմել՝ զանգահարելով (374) 60-70-11-11 հեռախոսահամարով կամ այցելելով Մ. Խորենացու փող., 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն, 7-րդ հարկ: E-mail: info@fsm.am . Web: www.fsm.am

1 Հաշվետու ժամանակաշրջանում հանգուցալուծված պահանջ-դիմումների ելքեր